

Հ Հ Գ Ա Ա Յ Ր Ա Չ Յ Ա Ա Ճ Ա Ռ Յ Ա Ն Ի Ա Ն Վ Ա Ն Լ Ե Ջ Վ Ի Ի Ն Ս Տ Ի Տ ՈՒ Տ

ԱՐՓԻՆԵ ԱՐՏՈՒՇԻ ԲԱԲՈՅԱՆ

ԸՆԴՄԻՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ժ. 02. 01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Գ. Կ. Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Յու. Ս. Ավետիսյան

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ Մ. Կ. Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական
մանակավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2015 թ. հունիսի 22-ին՝ ժամը
15.00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՂ-ի՝
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. մայիսի 20-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

բ.գ.թ. դոցենտ Ն. Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ի թիվս լեզվական այլ իրողությունների՝ ժամանակակից հայերենի շարահյուսությունը նորագույն շրջանի հայ լեզվաբանության համեմատաբար լավ քննված բաժիններից է: Սակայն լեզուն, պայմանավորված իր բարդ ու բազմաբնույթ համակարգով, նոր բացահայտումների անսպառ հնարավորություն է տալիս հետազոտողին: Նման հնարավորություն տվող երևույթներից մեկը ընդմիջարկությունն է, որով ողողված են խոսքային գործառությունները: Ինչ խոսք, մասնագիտական գրականության մեջ լեզվաբաններն այս կամ այն չափով անդրադարձել են խնդրին, սակայն այդ անդրադարձները հիմնականում պատեհային բնույթ են կրել՝ թելադրված շարահյուսական համապատասխան երևույթներն իրենց շրջապատով ներկայացնելու իրողությամբ: Մեր ուսումնասիրությունը մի համեստ փորձ է՝ վեր հանելու ժամանակակից արևելահայ գրական լեզվում ընդմիջարկություններն ու ընդմիջարկման երևույթը կարգաբերված եղանակով՝ ըստ շարահյուսական կաղապարների ներսում դրանց ի հայտ գալու հավանականության և հնարավորության:

Թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է վերը նշված կարգաբերվածությամբ, ուստի խնդիր է ծագում կարևորելու առաջադրված թեման, տալու ընդմիջարկման՝ որպես խոսքային անհրաժեշտ իրողության բնորոշումը, պարզելու, թե ինչ միավորներ կարող են զբաղեցնել ընդմիջարկվող «տարածքը»՝ խոսքային իրադրությամբ թելադրված, ինչպես նաև կատարելու համապատասխան վերլուծություններ՝ անհրաժեշտ խմբավորումներով:

Չետազոտության առարկան: Չետազոտության առարկան ընդմիջարկությունն է, որ հանդես է գալիս կապակցական բոլոր հնարավոր կաղապարների ներսում՝ ենթակա-ստորոգյալ, որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, բացահայտիչ-բացահայտյալ, խնդրառու-խնդիր, պարագառու-պարագա, կապ-կապվող բառ կապակցությունների միջև, ինչպես նաև գերադաս-ստորադաս բաղադրիչներով այլ (դերբայական դարձված, բարդ նախադասություն) կառույցներում, այլև ժխտական բառ-մասնիկ-բայածև և համագոր անդամներով արտահայտություններում:

Չետազոտության նորույթը: Սույն աշխատանքը ժամանակակից հայերենում ընդմիջարկությունները համակարգորեն բնութագրելու առաջին փորձն է, որն իր նախատիպը չունի. հրապարակի վրա է միայն գրաբարում ընդմիջարկությունների գործածությանը վերաբերող մեկ հոդված¹: Մեր ուսումնասիրությունը յուրօրինակ է նրանով, որ վերաբերում է լեզվի պատմության մի այլ փուլի և հեղինակի ուժերի ներածին չափ ներկայացնում է այդ փուլում

¹ Տե՛ս *Էդուարդ Սկրտչյան*, Ընդմիջարկությունները որպես քերականական կապակցությունները տրոհող կառույցներ գրաբարում (ՀՀ ԳԱԱ, «Պատմա-բանասիրական հանդես», 2007, 3 (176), էջ 142 - 154):

գործառող ընդմիջարկությունների խմբավորված առատ բազմություն՝ ըստ արդի արևելահայերենի շարահյուսական կաղապարների ներսում դրա ենթաբազմությունների դրսևորման հնարավորության և դրսևորվածության:

Յետազոտության նպատակը և խնդիրները: Յետազոտելիս նպատակ ենք ունեցել գիտական շրջանառության մեջ դնելու ժամանակակից հայերենում գործառավող ընդմիջարկությունները՝ տալով դրանց համակողմանի բնութագիրը, որն աշխատել ենք իրականացնել մեր առջև ծառայած հետևյալ խնդիրների լուծման միջոցով:

1. Յույց տալ քերականական կապակցությունների և մի քանի այլ կառույցների այն բաղադրիչները, որոնց միջև գործածվում են ընդմիջարկությունները, կարևորել այդ բաղադրիչների իմացությունը, քանի որ միայն դրանց հստակ տարբերակմամբ է հնարավոր որոշել ընդմիջարկությունների կազմը և արտահայտությունը, այլև գործածության սահմանները:

2. Ընդմիջարկությունների արտահայտությամբ որոշել նրանց տեսակները, որ կարող են լինել մենաբառ, բազմաբառ կապակցական, բազմաբառ հարակցական և այդ բոլորը կամ դրանց մի մասն ընդգրկող համադրական կամ բազմահամադրական:

3. Երևան հանել ընդմիջարկող միավորների և ընդմիջարկվող կառույցների փոխապայմանավորվածությունը, ընդգծել նրանց հարաբերությունը, այն է՝ որքան որոշակի ու կայուն դիրքում են քերականական կապակցությունները կամ ընդմիջարկելի այլ կառույցները, նույնքան բազմազան ու փոփոխական են ընդմիջարկությունները:

4. Միաժամանակ ի հայտ բերել, որ նախադասության անդամների շարահյուսական փոփոխությունները կարող են ընդմիջարկությունների կազմի, ներքին կապերի փոփոխություններ առաջ բերել (սա փաստվում է աղբյուրներից ընտրած օրինակներով):

5. Ընդմիջարկությունների ամբողջական քննությամբ հիմնավորել նրանց տեղն ու դերը խոսքի մեջ, առնչակցությունները միջանկյալ, ներդրյալ բառերի, կապակցությունների, տրոհվող լրացումների հետ:

Յետազոտության տեսական արժեքը: Նյութի քննության ընթացքում անհրաժեշտաբար անդրադարձ է կատարվում շարահյուսական բազմաթիվ հարցերի, և խնդրո առարկայի պահանջներով տրվում են համապատասխան բացատրություններ ու լուծումներ, ինչպես նաև ընդմիջարկությունների բնութագրումներով ձևավորվում է հայեցակարգ, որը կարող է տեսական հիմք լինել լեզվի մյուս փուլերում գործառող նույնատիպ կառույցների ուսումնասիրության համար:

Յետազոտության գործնական արժեքը: Տեսականորեն հագեցած աշխատանքը, անշուշտ, ունի և գործնական արժեք. լեզվի պատմությամբ, նախադասության կառուցվածքի ուսումնասիրությամբ զբաղվողների համար,

բուհական համակարգում աշխատող մասնագետների համար կարող է օգտակար լինել հատկապես ընտրովի թեմայով դասախոսություն կարդալու հարցում:

Չետազոտության մեթոդը: Ուսումնասիրությունը կատարելիս գերազանցապես առաջնորդվել ենք *Նկարագրական* մեթոդով: Միաժամանակ, հիմք ընդունելով անմիջական բաղադրիչների մեթոդը, թելադրված աշխատանքի բնույթով, առաջ ենք քաշել *անմիջական բաղադրիչների (ԱԲ) միջակայքի բազմության արտածման մեթոդի* գաղափարը:

Չետազոտության լեզվական մյուսը: Ընդմիջարկությունները լայն տարածում ունեցող միավորներ են, և նրանց գործածության իրական պատկերն ունենալու համար համաձայնաբար ընտրվել են գրավոր խոսքի հետևյալ տեսակները՝ 1) *գիտական*, որի մեջ մտնում են գիտական ուսումնասիրությունները՝ հողվածներ, մենագրություններ և այլն, 2) *գրական-գեղարվեստական*՝ ա) արձակ երկեր, բ) չափածո երկեր, գ) թատերգական երկեր, 3) *մամուլ*, որը բազմազան է՝ հրատարակված տարբեր ժամանակներում, տարբեր մարզերում, քաղաքներում կամ հիմնարկներում:

Աշխատանքի փորձարկումը: Սկսած 2010 թվականից՝ աշխատանքի հիմնական դրույթների մի մասը գեկուցվել է հանրապետական գիտաժողովներում, մյուսները՝ որպես հողվածներ, լույս են տեսել գիտական հանդեսներում և ժողովածուներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, ունի օգտագործված գրականության և համառոտագրությունների ցանկեր: Ծավալը 151 էջ է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ տրված են հարցին առնչվող պատմական սեղմ, բայց և անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև ներկայացված են ընդմիջարկությունների և հարակից միավորների՝ տրոհվող լրացումների, միջանկյալ և ներդրյալ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների ընհանրություններն ու տարբերությունները: Ներածական հատվածը եզրափակվում է հետազոտության նպատակով և դրան հասնելու խնդիրների առաջադրմամբ, որոնց լուծումը բերված է համապատասխան գլուխներում::

Հարկ է նկատի ունենալ, որ թեև տրոհվող լրացումները, միջանկյալ ու ներդրյալ կառույցներն առնչվում են մեր կողմից ուսումնասիրվող թեմային, և նրանց միջև կան համեմատության եզրեր ու աղերսներ, այնուամենայնիվ գլխավորն այն է, որ դրանք արմատապես տարբերվում են ուսումնասիրության նպատակով ու խնդիրներով. եթե նշվածները բնութագրվում են հնչերանգային, իմաստային հարաբերությունների, կետադրության բացահայտումների առումով, ապա ընդմիջարկությունները վերաբերում են քերականական

կապակցությունների և նախադասության կառուցվածքային առանձնահատկությունների բացահայտումներին բացառապես ընդմիջարկվածամբ:

Կարևոր է նկատի առնել հետևյալը: Ընդմիջարկություն բնավ չի նշանակում այս կամ այն կապակցության ներսում հայտնված համառոտ կամ ընդարձակ՝ երկրորդական նշանակությամբ միավոր: Ծիշտ է, կարող են համընկնել տրոհվող և ընդմիջարկող, միջանկյալ և ընդմիջարկող, ներդրյալ և ընդմիջարկող միավորների սահմանները, սակայն ընդմիջարկությունները սրանցով չեն սպառվում: Ընդմիջարկություն է շարահյուսական անմիջական բաղադրիչները (ԱԲ) միջնորդավորող ամեն մի միավոր, և շատ հնարավոր է, որ այդ ընդմիջարկող միավորի գոյությունը պարտադիր լինի տվյալ բաղադրիչների միջև: Այսպես՝ «ընկերոջս կապույտ վերարկուն» շարահյուսական կառույցում ընդմիջարկված են հատկացուցիչն ու հատկացյալը, բայց դա չի նշանակում, թե «կապույտ» որոշիչը, որ ընդմիջարկող միավորն է հիշյալ բևեռների, ավելորդ անդամ է, և որպես ընդմիջարկություն կարող է անտեսվել: Ի տարբերություն ներդրյալ և միջանկյալ միավորների՝ բերված օրինակի որոշիչ անդամը *պարտադիր ընդմիջարկություն* է. ավելին, որոշիչը շարադասական առումով ճիշտ և ճիշտ իր տեղում է: Ի տարբերություն շարահյուսական անմիջական բաղադրիչների կապակցությունն ընդմիջող պարտադիր ընդմիջարկությունների՝ *ոչ պարտադիր ընդմիջարկություններ* են ներդրյալ և միջանկյալ միավորները: Սակայն վերջիններս պարտադիր չեն հարաբերականորեն, այսինքն՝ այնքանով, որքանով նրանց բացակայությամբ շարահյուսական կառուցվածքը չի խաթարվում: Մինչդեռ իրականում այս միավորներն անգամ պարտադիր են՝ տվյալ խոսքային իրադրության թելադրանքով. եթե պարտադիր չլինեին, պարզապես չէին գործածվի: Նկատենք սակայն, որ պարտադիր ընդմիջարկություններն էլ համապատասխան կաղապարներում անպայման հանդես եկող մեկընդմիշտ տրված պատրաստի միավորներ չեն: Քիչ առաջ բերված կաղապարային օրինակում ևս կարող է չեզոքանալ ընդմիջարկությունը, եթե ընդհանուր գոյական լրացյալով որոշիչ և հատկացուցիչ լրացումները շարադասական այլ դրսևորում ունենան լրացյալի նկատմամբ. մասնավորապես բանատեղծական (նաև առօրյա-խոսակցական) ոճին խորթ չէ «ընկերոջս վերարկուն կապույտ» շրջուն շարադասությունը, որտեղ չի դրսևորվել սպասելի ընդմիջարկությունը՝ ի տարբերություն «ընկերոջս կապույտ վերարկուն» սովորական շարադասության:

Վկայենք մեկ օրինակ՝ նախապես նշելով, որ ստորև բերվող միևնույն կառույցը մատնացույց է արվում և՛ որպես ներդրյալ նախադասություն, և՛ որպես ընդմիջարկություն: Այսպես՝ «Եվ այդ երկաթե շղթան *(նա ձեռքը տարավ դեպի հաստ շղթան, որից քարշ էր ընկած ահագին երկաթյա խաչը կրծքի վրա)* միշտ իմ պարանոցին կրած պիտի ունենամ» (Բ): Վ. Առաքելյանն այս օրինակը բերում է

ներդրյալ նախադասության համար²: Մեզ հետաքրքրողը նախադասության կառուցվածքն է՝ կապված ստորոգյալի և ուղիղ խնդրի շարադասության հետ: Դիտարկումը ցույց է տալիս, որ՝ ա) *շղթան* ուղիղ խնդիրը ընդգծման սկզբունքով առաջադասվել է, որի պատճառով *կրած պիտի ունենամ* ստորոգյալը հետադասվել է, բ) ստորոգյալը և ուղիղ խնդիրը ընդմիջարկվել են ներդրյալ բարդ ստորադասական նախադասությամբ, ժամանակի պարագայով և տեղի պարագայով, որն ունի իր հատկացուցիչ լրացումը: Այնպես որ, քերականական կապակցության բնութագրումով ճշգրտում ենք նախադասության անդամները, կառուցվածքը, հետևապես՝ արտահայտված միտքը:

Առաջին գլխում ընդմիջարկությունները ներկայացվում են քերականական կապակցությունների և դրանց շարադասական փոփոխությունների հարաբերությամբ: Շարահյուսական կապակցություններում կան միավորներ, անդամներ, որոնք ունեն կայուն շարադասություն և լինելով իրենց տեղերում՝ կարող են նաև ընդմիջարկվել: Որոշ անդամների շարադասական փոփոխությունները կարող են առաջ բերել ընդմիջարկությունների փոփոխություններ՝ ծավալների սահմանափակում կամ հավելում, գործածության չեզոքացում և այլն: Այս բոլոր դրսևորումները տարբեր աղբյուրներից քաղած առատ նյութի հիման վրա մանրամասնորեն դիտարկվում են աշխատանքում:

Այս գլխում են բնորոշվում ընդմիջարկությունն ու ընդմիջարկությունը, բերվում են այն կաղապարները, որոնցում հնարավոր է ընդմիջարկությունների կիրառությունը:

Ընդմիջարկությունը քերականական կապակցությունները տրոհող պարզ կամ բաղադրյալ միավոր է, որի սահմանները կարող են համընկնել բառի, բառակապակցության, նախադասության, քերականորեն չկապակցված բառերի ու այլ հարակցությունների սահմանների: Մենք նշեցինք, որ ընդմիջարկվող շարահյուսական կապակցությունները կայուն են և որոշակի, իսկ ընդմիջարկությունները բազմազան են իրենց դրսևորումներով, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենում դրանք շատ են, և կարելի է խմբավորել երկու սկզբունքով՝ **քանակային** և **գործառական**, որոնք, սակայն, անկախ չեն իրարից: Քանակային առումով ընդմիջարկությունները լինում են միաբառ և բազմաբառ: Աշխատանքում բերվում են բազմաթիվ օրինակներ, որոնցում պարզորոշ երևում են ընդմիջարկության և այս կամ այն շարահյուսական միավորի զուգադիպությունները: Աշխատանքի այս հատվածում են քննվում նաև կոչականի հետ կապված ընդմիջարկման դեպքերը՝ նույնպես միաբառ և բազմաբառ արտահայտություններով:

Ընդմիջարկությունները գրավոր և բանավոր խոսքի տարրեր են, որոնք հանդես են գալիս ինչ-ինչ շարահյուսական կազմությունների ներսում և, զուրկ լինելով ինչ-որ չափաբերումներից կամ կանոնարկումներից, ունեն ազատ և

² Տես Վ. Առաքելյան, Չայերենի շարահյուսություն, Բ, էջ 448:

անսահմանափակ գործածություններ: Իրենց դրսևորումներով կապված լինելով քերականական մի շարք հասկացությունների և իրողությունների հետ և ունենալով որոշակի դրսևորումներ՝ ընդմիջարկությունները վերլուծությունների և բնութագրումների են արժանանում համապատասխան գործառությունների դաշտում: Այլ կերպ ասած, նախապես չլինելով կանոնարկված, համակարգված և օրենքներով ու օրինաչափություններով մշակված, ընդմիջարկությունները, գործածությունից հետո դառնալով լեզվական փաստեր, արժանանում են ուշադրության, համակարգվում, դասդասվում և նոր միայն գնահատվում՝ դրանով իսկ տարբերվելով լեզվական-քերականական բազմաթիվ միավորներից, մի շարք դեպքերում էլ նմանվելով որոշ միավորների:

Ընդմիջարկության արտահայտության համար պետք է առնվազն երկանդամ բաղկացություն: Քանի որ ընդմիջարկությունը հանդես է գալիս երկանդամ ոլորտի կազմում, վերջինս նպատակահարմար ենք գտնում անվանել **ընդմիջարկվելիք բաղադրություն** (կամ պարզապես **ընդմիջարկվելիք**): Ընդմիջարկվելիք բաղադրությունը, ուրեմն, շարահյուսական այն տիրույթն է, որը ենթակա է «ճեղքման»՝ ընդմիջարկման: Դա, ինչպես ասացինք, ընդմիջարկության դրսևորման ոլորտն է: **Ընդմիջարկումը** ընդմիջարկվելիք բաղադրության «ճեղքման» երևույթն է: Ընդմիջարկվելիք բաղադրության ճեղքմամբ ոչ միայն ընդմիջարկություն, այլև ընդմիջարկվելիքի «թևեր»՝ բևեռներ են գոյանում: Ընդմիջարկվելիք բաղադրության՝ ընդմիջարկմամբ կազմավորված բևեռներն անվանում ենք **ընդմիջարկյալներ**: Ըստ այսմ, գիտակցաբար դիմելով «խտացված» վերացարկման օգնությանը, կարող ենք տալ ընդմիջարկության հետևյալ բնորոշումը. **ընդմիջարկությունն ընդմիջարկվելիք բաղադրության ընդմիջարկմամբ ընդմիջարկյալների միջակայքում տեղակայված խոսքային ոչ միասեռ գոյացություն է՝ որպես լեզվական փաստ**: Թեև դսևորված ընդմիջարկության կազմը կարող է լինել միասեռ բաղադրիչների գոյացություն (ասենք՝ համադաս անդամներ), այնուամենայնիվ դա կարող ենք արձանագրել միայն դրսևորումից հետո՝ իբրև խոսքով ամրագրված (հետխոսքային) լեզվական փաստ. նախապես հնարավոր չէ որևէ կռահում անել, քանի որ գոյություն չունի ընդմիջարկության միօրինակ կաղապար: Ընդմիջարկությունն անմիասեռ է հենց իր հնարավոր ծավալով, որ կարող է ընդգրկել մեկ բառից (կամ որպես այդպիսին ընկալվող ավելի ցածր մակարդակի միավորից) մինչև տեքստ ընկած տիրույթը, և նրա դրսևորման պայմանները բացառապես իրադրային են:

Ընդմիջարկյալների միջակայքը, մաթեմատիկայի լեզվով ասած, կարող ենք համարել **n** թվով շարահյուսական **միավորների բազմություն**: Նկատի առնելով, որ շարահյուսական բաղադրիչները կարող են կապակցվել կա՛մ անմիջականորեն, կա՛մ ընդմիջարկմամբ, մեր դիտարկելիք բազմությունն էլ, ըստ այդմ, կլինի **լի** կամ **դատարկ**: Եթե **n**-ը բազմության միավորների թիվն է, ապա միջակայքի նկատմամբ դրա մաթեմատիկական արտահայտությունը կլինի հետևյալը՝

ա. $n = 0$,
բ. $n > 0$:

Ընդմիջարկությունները երկանդամների միջակայքում հայտնված միավորներն են: Նկատի ունենալով շարահյուսական միավորների խոսքիմասային հարաբերությունները՝ կարող ենք տալ ընդմիջարկման (*ընդմիջարկման*, ո՛չ ընդմիջարկության) համապատասխան կաղապարները:

Կարգային միավորների պայմանական նշաններն են՝ **Գ**, **Ա**, **Բ**, **Մ**, որոնք, համապատասխանաբար, *գոյական*, *ածական*, *բայ*, *մակբայ* խոսքի մասերի անվանման սկզբնատառերն են: Ձևավոր փակագծերը միջակայքի բազմության նշանն են, իսկ **n**-ը ընդմիջարկության քանականիշն է: Ահա պատկերը $Գ \{+ n +\}$ **Գ**, $Ա \{+ n +\}$ **Գ**, $Գ \{+ n +\}$ **Բ**, $Մ \{+ n +\}$ **Բ**, $Մ \{+ n +\}$ **Ա**, $Մ \{+ n +\}$ **Մ**:

Սրանք կարգային կաղապարներն են: Այժմ ներայացնենք սրանց համարժեք գործառական կաղապարները: Գործառական միավորների պայմանական նշաններն են՝ **Ե** (ենթակա), **Ս** (ստորոգյալ), **Ո** (որոշիչ), **Ո՛** (որոշյալ), **Յ** (հատկացուցիչ), **Յ՛** (հատկացյալ), **Բ** (բացահայտիչ), **Բ՛** (բացահայտյալ), **Խ** (խնդիր), **Խ՛** (խնդրառու), **Պ** (պարագա), **Պ՛** (պարագառու): Ահա՛ պատկերը՝ $Ե \{+ n +\}$ **Ա**, $Ո \{+ n +\}$ **Ո՛**, $Յ \{+ n +\}$ **Յ՛**, $Բ \{+ n +\}$ **Բ՛**, $Խ \{+ n +\}$ **Խ՛**, $Պ \{+ n +\}$ **Պ՛**:

Համեմատելով հարացույցները՝ ակնհայտ է դառնում դրանց կաղապարների քանակային նույնությունը: Սակայն հպանցիկ դիտարկումն անգամ ցուց է տալիս, որ իրականում այս նույնությունը զուգադիպության արդյունք է, և գործառական ու կարգային կաղապարների համապատասխանությունն անհամաչափ բաշխվածություն ունի: Համոզվելու համար բաղդատենք դրանք՝ ելակետ ընդունելով կարգային կաղապարների հերթականությունը:

Ա) $Գ \{+ n +\}$ **Գ** կաղապարը գործառական տիրույթում իրացվում է երկու ենթակաղապարով՝ $Յ \{+ n +\}$ **Յ՛**, $Բ \{+ n +\}$ **Բ՛**:

Բ) $Ա \{+ n +\}$ **Գ** կաղապարին գործառական տիրույթում համապատասխանում է մեկ առաջնային կաղապար՝ $Ո \{+ n +\}$ **Ո՛**, երբ ածականն է գոյականի լրացումը. բայց լրացական հակառակ հարաբերությունն էլ է հնարավոր «կողմնակիորեն», երբ գոյականն է դառնում ածականի խնդիր լրացում, ուստի $Ա \{+ n +\}$ **Գ** կարգային կաղապարի հարաբերակիցն է նաև $Խ \{+ n +\}$ **Խ՛** գործառական կաղապարը:

Գ) $Գ \{+ n +\}$ **Բ** կաղապարը գործառական համապատասխանություն է ունենում երեք ենթակաղապարի հետ՝ $Ե \{+ n +\}$ **Ա**, $Խ \{+ n +\}$ **Խ՛**, $Պ \{+ n +\}$ **Պ՛**:

Դ) $Մ \{+ n +\}$ **Բ** կաղապարին գործառական տիրույթում կենտ կաղապար է սպասում՝ $Պ \{+ n +\}$ **Պ՛**:

Ե) $Մ \{+ n +\}$ **Ա** կաղապարը նույնպես հարաբերակից է $Պ \{+ n +\}$ **Պ՛** գործառական կաղապարին (ածականին լրացնող մակբայը, այսպես ասած, կողմնակի պարագա է):

2) Մ {+ n +} Մ կաղապարը ևս նախորդի պես Պ {+ n +} Պ՝ գործառական կաղապարի տիրույթին է պատկանում (այս դեպքում մակբային լրացնող մակբայն է կողմնակի պարագա):

Ընդմիջարկությունների կազմի բնութագրման հիմքում ընկած են նրանց միավորների քանակը և քերականական ներքին հարաբերությունները, որոնցով էլ փաստվում է նրանց տարասեռությունը (հետերոգենություն): Ըստ այդ նկատառումների՝ ընդմիջարկությունները չորս տեսակ են՝ 1) **քերականական գրոյական կապով ընդմիջարկություններ**. այդպիսիք մենաբառ ընդմիջարկություններն են, որոնք կարող են կապ ունենալ ընդմիջարկվող բաղադրիչների հետ, բայց, հե՛նց առանձնակիությամբ պայմանավորված, ընդմիջարկյալների միջև ինքնին զուրկ են հարաբերությունից, 2) **քերականական կապով ընդմիջարկություններ**. այդպիսիք երկու բառ են կամ բազմաբառ և միմյանց նկատմամբ լրացական կամ փոխլրացական հարաբերություններ ունեն. քանի որ համադաս միավորները լրացական հարաբերություն չունեն, մենք այն քերականական կապով ընդմիջարկության տեսակ չենք համարում, 3) **բաղադրյալ չեզոք** կամ **քերականական կապից զուրկ ընդմիջարկություններ**. կառույցի բառական միավորները քերականորեն կապված չեն միմյանց հետ, թեև հաջորդում են իրար, այլ կերպ ասած՝ *բաղադրիչների չեզոք հարաբերությամբ կառույցներ* են: Համադաս միավորները ևս այս տեսակին ենք հատկացնում հետևելով Շ. Բալլիին և Է. Աթայանին, որոնց կարծիքով համադասությունը կապակցություն չէ, այլ գրոյական միացություն. այն սոսկ արտաքին միավորում է ապահովում, բայց ոչ ներքին՝ լրացում-լրացյալ հարաբերությամբ պայմանավորված միացություն³, 4) **համադրական կամ բազմահամադրական ընդմիջարկություններ**. կարող են ներառել նախորդ կետերում նշված երկու կամ ավելի տեսակները, այսինքն ներառել քերականական *գրոյական կապով, ներքին կապով* բառակապակցական կամ ստորոգական, *չեզոք հարաբերությամբ* հարակցական միավորներ: Ընդմիջարկությունների **գործառական** այս չորս տեսակները, որ, որպես կանոն, աշխատանքում ներկայացնում ենք քանակային տեսակների հետ գիրկընդխառն, ընկած են մեր բնութագրումների հիմքում:

Երկրորդ գլխում ընդմիջարկությունները ներկայացնում ենք մի կողմից՝ նախադասության անդամների, մյուս կողմից՝ շարահյուսական կառույցների կամ կապակցությունների կազմում: Գլխավոր անդամներից ենթակայի ընդմիջարկման հնարավորություն է ստեղծվում բաղադրյալ և բազմակի ենթակաների դրսևորման դեպքերում. օրինակ՝ «*Զինվորներից (ՀՀ հարավային սահմանապահ զորամիավորումներում) երկուսը սխրանքի համար բարձր պարգևի արժանացան*» (բաղադրյալ ենթական ընդմիջարկվել է «ՀՀ հարավային սահմանապահ զորամիավորումներում» բառակապակցությամբ): «*Սամվելը* (նա

³ Տե՛ս Օ. Ասեթե, Î àù ày èèi ààèñ òèà è ài î ði ñù ò ðàì òóçñèi ài` yçùèà, ì ., “Î ði ài` àññ”, 1955, ñ. 116. Э. Атаян, Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, “Î èò è”, 1968, ñ. 216.

բոլոր իրադարձությունների կենտրոնական դեմքն էր) և Մուշեղը Բաֆֆու հայրենասիրության գաղափարակիրներն են» (բազմակի ենթական ընդմիջարկվել է նախադասությամբ): Մյուս գլխավոր անդամի՝ ստորոգյալի ընդմիջարկման հնարավորություններն ավելի մեծ են: Ընդմիջարկվել կարող են բաղադրյալ ստորոգյալի մի տեսակը, ինչպես նաև պարզ ստորոգյալի՝ ա) զուգադրական բայերով կազմությունները, բ) բաղադրյալ ու վերլուծական ժամանակներով կազմվածները, որոնք են սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակներն ու ենթադրական եղանակի ժխտականը, այլև գ) հարկադրականի դրական ու ժխտական խոնարհման և դ) արգելական հրամայականի վերլուծական կազմությամբ պարզ ժամանակային ձևերը: Աշխատանքում շատ են օրինակները. այստեղ կբավարարվենք միայն մեկով (տեղի սղության պատճառով)՝ «Եթե ուզում եք թատրոն ունենալ, *պետք է նրանց հոգաք*» (ՀԹ, 408):

Հետաքրքրություն է ներկայացնում երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի ընդմիջարկումը, որն առավելապես խոսակցական լեզվում է տարածված, որտեղից էլ թափանցում է գրական լեզու: Խոսակցականում սովորական են այսպիսի արտահայտությունները (ներկայացնում ենք հարացույցի կարգով)՝

Տուն գնալու երբ // որ // երբ որ // թե // թե որ լինես, ի՛նձ էլ իմաց տուր:

Տուն գնալու երբ // որ // երբ որ // թե // թե որ լինես, ի՛նձ էլ իմաց կտաս:

Տուն գնալիս երբ // որ // երբ որ // թե // թե որ լինես, ի՛նձ էլ իմաց տուր:

Տուն գնալիս երբ // որ // երբ որ // թե // թե որ լինես, ի՛նձ էլ իմաց կտաս:

Տուն գնալու որ // երբ լինում ես, ի՛նձ էլ իմաց տուր:

Բազմաբնույթ է նաև շարահյուսական կառույցների ընդմիջարկումը:

Շարահյուսական կառուցվածքը բնութագրելիս է. Աթայանը սահմանում է շարահյուսական երկու առանցքային հասկացություն՝ **շարահյուսական նվազագույն միավոր** և **շարահյուսական նվազագույն կառույց**: Առաջինը նախադասության անդամն է՝ ձևավորված նյութական խոսքի մասերով, թեև այդ անդամը կարող է նաև վերլուծական դրսևորում ունենալ՝ ընդհուպ մինչև դերբայական դարձված ու ստորադաս նախադասություն, որոնք նույն նվազագույն միավորի ընդլայնված տարբերակներն են, իսկ երկրորդը շարահյուսական նվազագույն կառույցը, շարահյուսական երկանդամն է՝ լրացում-լրացյալ հարաբերությամբ⁴: Ըստ հեղինակի՝ շարահյուսական նվազագույն միավորը **ատոմն** է, իսկ շարահյուսական նվազագույն կառույցը՝ **մոլեկուլը**⁵: Եթե նվազագույն կառույցին ավելանում է թեկուզ մեկ անդամ, ապա ունենում ենք **փնջային կառույց**⁶: Մեր աշխատանքի այս հատվածում քննության ենք առնում շարահյուսական նվազագույն կառույցի կամ երկանդամ կապակցության ընդմիջարկումը, այլ կերպ ասած՝ դիտարկում ենք

⁴ Տե՛ս Յ. Աթայն, նշված աշխատությունը, էջ 141, 215 – 217:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 217:

շարահյուսական նվազագույն կառույցներում հանդիպող ընդմիջարկությունները՝ համապատասխան կաղապարներով ու դրանց իրացումներով: Այստեղ հիշեցնենք միայն, որ այդ կաղապարները ներկայացնում են մի կողմից՝ գլխավոր անդամներով ձևավորված կառույցի տարբերակները, մյուս կողմից՝ գերադաս-ստորադաս կապակցական կառույցները: Այս նույն հատվածում են մեկնաբանվում դերբայական դարձվածի արտաքին և ներքին ընդմիջարկումները, կապական կապակցությունների ընդմիջարկումները, ինչպես նաև ընդմիջարկման դեպքերը ժխտական կառույցներում:

Երրորդ գլխում քննել ենք շարահյուսական այլ կառույցներում դրսևորվող ընդմիջարկությունները: Դրանք բարդ համադասական, ստորադասական ու բազմաբարդ նախադասություններն են, ինչպես նաև ուղղակի խոսքը: Այս գլխում ենք ներկայացրել նաև անմիջական բաղադրիչների միջակայքի բազմության արտածման մեթոդը:

Բարդ նախադասություններում ընդմիջարկությունները բնութագրելիս նկատի են առնվում այդ նախադասությունների բաղադրիչների միջև հանդիպող կառույցները: Համադասական և ստորադասական բաղադրիչները գործածվում են և՛ առանձնաբար (միայն բարդ համադասական կամ միայն բարդ ստորադասական), և՛ բազմաբարդ նախադասություններում: Քննության ընթացքում պարզվում է, որ ստորադասական կառույցներում ընդմիջարկությունները համեմատաբար ավելի հաճախական գործածություն ունեն, քան համադասական կառույցներում, որը բացատրվում է նրանցում գործող կապակցության եղանակների և միջոցների բնույթով: Համաձայնորեն դիտարկվում են *այնքան – որքան, նույնքան – որքան, այնքան – որ, այն աստիճան(ի) – որ, այնպես – ինչպես, այնպես – որ, նա - ով, այնտեղ – որտեղ* հարաբերյալ-հարաբերիչներով կառուցված նախադասությունները:

Ուղղակի խոսքն ուղեկցվում է բացատրություններով, լրացուցիչ տեղեկություններով, հաղորդումներով, զգացմունքային, վերաբերմունքային և բազմաթիվ այլ իմաստային հարաբերություններ նշող խոսքային դրսևորումներով, որոնք սովորաբար տեղ են գտնում ուղղակի խոսքին զուգորդվող *հեղինակային խոսքի* մեջ:

Չեղինակային խոսքը շարադասությամբ երեք տեսակ է՝ նախադաս, միջադաս և հետադաս: Չեղինակային խոսքի շարադասությունը պայմանավորվում է ուղղակի խոսքի կառուցվածքով, նրա բաղադրիչների գործածությամբ, շարադրանքի եղանակներով և, ի վերջո, հեղինակի նպատակադրմամբ:

Նախադաս և հետադաս շարադասությամբ հեղինակային խոսքերը, հասկանալիորեն, ընդմիջարկություն չեն կարող լինել: Միջադաս գործածությունն է, որ նպաստում է ընդմիջարկության դերով հանդես գալուն: Իսկ միջադաս գործածության խնդիրը պետք է ճշտորեն լուծել՝ հիմք ընդունելով ուղղակի խոսքի ինչ-ինչ բաղադրիչների ընդմիջարկվելու փաստը, այդ փաստի՝ խոսքային

իրադրությամբ պայմանավորված անհրաժեշտությունը, որոնց հանգամանորեն անդրադառնում ենք աշխատանքի այս հատվածում:

Հասկանալի է, որ միջադաս հեղինակային խոսքը կարող է ընդմիջարկության դերով հանդես գալ ոչ միայն բարդ կառույցների բաղադրիչ նախադասությունների միջև, այլև կամայական կանոնիկ (ոչ բերի) պարզ նախադասության անդամների միջև:

Վերջին գլուխն ավարտում ենք անմիջական բաղադրիչների միջակայքի բազմության արտածման մեթոդի ներկայացմամբ, որն ամբողջությամբ ներկայացնում ենք այստեղ:

Մեթոդի անվանումից երևում է, որ սրա հիմքում հե՛նց ԱԲ մեթոդն է:

Մեթոդի էությունն այն է, որ՝

ա. հետազոտության ենթակա շարահյուսական բաղադրությունից դուրս ենք բերում երկանդամ կապակցությունները,

բ. պարզում ենք զուգանդամի միջակայքի պարունակությունը՝ լի կամ դատարկ բազմություն լինելը,

գ. դատարկ բազմության դեպքում արձանագրում ենք ընդմիջարկության չզոյությունը,

դ. լի բազմություն ունենալիս արտածում ենք այն տվյալ երկանդամի միջակայքից,

ե. որոշում ենք ընդմիջարկության տեսակը:

Մեթոդի փորձարկումը կատարենք միջին բարդության մի օրինակի վրա:

Խնդիր: Որոշել ընդմիջարկությունները հետևյալ շարահյուսական բաղադրության մեջ՝ նրանից արտածելով բոլոր ԱԲ միջակայքերի բազմությունները:

Հանձնաժողովի անդամները, որոնք երաժշտության հմուտ մասնագետներ էին, բարձր գնահատեցին ջութակահարի կատարողական արվեստը:

Խնդրի մեկնաբանությունը: Տրված է շարահյուսական մի բաղադրություն. հարկ է նրանից արտածել բոլոր ԱԲ միջակայքերի բազմությունները՝ որոշելու համար նրանում եղած ընդմիջարկությունները: Խնդրի լուծման համար պարզելու ենք նախ՝ այդ բաղադրության շարահյուսական կառուցվածքը, ապա՝ այդ կառուցվածքում առկա բոլոր ԱԲ-ները, հետո՝ դրանց միջակայքերը, որտեղ որոշելու ենք բազմություններն ու արտածելու ենք դրանք: Խնդրի լուծումը, այսպիսով, կատարելու ենք երեք հարցի օգնությամբ:

Լուծում:

1) Բերված շարահյուսական բաղադրությունը կառուցվածքով երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն է:

2) Նախադասության անմիջական բաղադրիչների որոշման ելակետ ենք ընդունում մեծ ենթակառուցվածքներից փոքրերին անցումը՝ աստիճանական նվազման սկզբունքով: Քանի որ կառուցվածքով երկբաղադրիչ բարդ

ստորադասական նախադասություն է, ապա առաջնային ԱԲ-ները կլինեն գերադաս և ստորադաս բաղադրիչները: Սակայն կարող ենք առաջնորդվել նաև այլ մոտեցմամբ՝ ստորադաս նախադասությունը դիտելով որպես գլխավոր նախադասության անդամներից մեկը: Ի դեպ, կապակցական երկանդամների վերհանման հաջորդական քայլերն ի վերջո երկու մոտեցման հնարավորությունն էլ տալիս են: ԱԲ գործառական կաղապարների հարացույցը ներկայացնում ենք ձախ թևում, կարգային կաղապարների հարացույցը՝ աջ թևում: Լեզվական արտահայտությունների հարացույցը ներկայացնում ենք կաղապարային հարացույցների միջև: Եվ այսպես՝ կունենանք հետևյալ ԱԲ-ները (դրանք ներկայացնելիս կարելի է անտեսել մեծատառերը (եթե հատուկ անուններ չեն) և միջբաղադրիչային, ինչպես նաև ավարտման տրոհության նշանները).

ԱԲ-ներ՝ ըստ գերադաս և ստորադաս բաղադրիչների

ա. *հանձնաժողովի անդամները բարձր գնահատեցին ջութակահարի կատարողական արվեստը*

բ. *որոնք երաժշտության հմուտ մասնագետներ էին*

Գլխավորի ԱԲ-ներն են՝

1. Ե {+ n +} Ս – *անդամները գնահատեցին* – Գ {+ n +} Բ
2. Հ {+ n +} Հ՝ – *հանձնաժողովի անդամները* – Գ {+ n +} Գ
3. Խ {+ n +} Խ – *գնահատեցին արվեստը* – Բ {+ n +} Գ
4. Ո {+ n +} Ո՛ – *կատարողական արվեստը* – Ա {+ n +} Գ
5. Հ {+ n +} Հ՝ – *ջութակահարի արվեստը* – Գ {+ n +} Գ
6. Պ {+ n +} Պ՛ – *բարձր գնահատեցին* – Ս/Ա {+ n +} Բ
7. Ո՛ {+ n +} Ո – *անդամները որոնք երաժշտության հմուտ մասնագետներ էին* – Գ {+ n +} Ա (որոշիչ ստորադաս բաղադրիչը՝ որպես թե ածական)

Ստորադասից ԱԲ-ներն են՝

8. Ե {+ n +} Ս – *որոնք մասնագետներ էին* – Գ {+ n +} Բ/Գ
9. Հ {+ n +} Հ՝ – *երաժշտության մասնագետներ* – Գ {+ n +} Գ
10. Ո {+ n +} Ո՛ – *հմուտ մասնագետներ* – Ա {+ n +} Գ

3) Վերջին հարցով գտնում ենք ԱԲ միջակայքերի բազմությունները՝ արտածելով դրանք՝ անկախ լի կամ դատարկ լինելուց: Բազմությունների արտածումը կատարում ենք՝ ըստ նախորդ կետի ԱԲ-ների համարակալված հաջորդականության՝ թողնելով միայն երկանդամն ու նրա գործառական կաղապարը (կարգային կաղապարը ներկայացնելու անհրաժեշտություն այլևս չկա): Հաջորդ քայլով թողնում ենք գործառական կաղապարը՝ նրա ներսում՝ ձևավոր փակագծերի մեջ, գետեղելով *n* բազմության արժեք(ներ)ը՝ ընդմիջարկությունը: Եթե բազմությունը դատարկ է, ձևավոր փակագծերի մեջ նշում ենք «0»: Այսպես՝

1. Ե {+ n +} Ս – *անդամները գնահատեցին*
Ե {+ *որոնք երաժշտության հմուտ մասնագետներ էին, բարձր* +} Ս
2. Հ {+ n +} Հ՝ – *հանձնաժողովի անդամները*

3. {+ 0 +} Յ՝

3. Խ՝ {+ n +} Խ – գնահատեցին արվեստը

Խ՝ {+ ջութակահարի կատարողական +} Խ

4. Ո {+ n +} Ո՝ – կատարողական արվեստը

Ո {+ 0 +} Ո՝

5. Յ {+ n +} Յ՝ – ջութակահարի արվեստը

Յ {+ կատարողական +} Յ՝

6. Պ {+ n +} Պ՝ – բարձր գնահատեցին

Պ {+ 0 +} Պ՝

7. Ո՝ {+ n +} Ո – անդամները որոնք երաժշտության հմուտ մասնագետներ էին

Ո՝ {+ 0 +} Ո

1. Ե {+ n +} Ս – որոնք մասնագետներ էին

Ե {+ երաժշտության հմուտ +} Ս

9. Յ {+ n +} Յ՝ – երաժշտության մասնագետներ

Յ {+ հմուտ +} Յ՝

10. Ո {+ n +} Ո՝ – հմուտ մասնագետներ

Ո {+ 0 +} Ո՝

Խնդրի ամփոփում: Պահանջվում էր որոշել հանձնարարված բաղադրության ընդմիջարկությունները՝ արտածելով բոլոր ԱԲ միջակայքերի բազմությունները: Խնդրի լուծման տվյալներն ամրագրված են ստորև բերվող պատասխանում:

Պատասխան:

Ա. Որոշված և դուրս են բերված բոլոր ԱԲ-ները՝ թվով 10:

Բ. Որոշված են ԱԲ միջակայքերը, արտածված են դրանց բազմությունները՝ թվով 10:

Գ. Կան լի և դատարկ բազմություններ՝ 5-ական հավասարաչափ բաշխմամբ:

Դ. Դատարկ բազմություններ ունեն 2-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ համարների երկանդամների միջակայքերը:

Հետևություն՝

Նշված համարների միջակայքերում ընդմիջարկություն չկա:

Ե. Լի բազմություններ ունեն 1-ին, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ համարների միջակայքերը:

Լի բազմություններն ընդմիջարկություններ են:

Ե.ա. 1-ին ԱԲ-ն կազմում են գերադաս բաղադրիչի գլխավոր անդամները. ընդմիջարկված են՝ ա. որոշիչ ստորադաս նախադասությամբ, բ. պարագայով. ընդմիջարկության տիպը՝ **բաղադրյալ չեզոք:**

Ե.բ. 3-րդ ԱԲ-ն են կազմում խնդրառու բայը և ուղիղ խնդիրը. ընդմիջարկված են գոյական խնդրի հատկացուցիչ և որոշիչ տարասեռ լրացումներով, հետևաբար՝ ընդմիջարկության տիպը՝ **բաղադրյալ չեզոք:**

Ե.գ. 5-րդ ԱԲ-ն են կազմում հատկացուցիչն ու հատկացյալը. ընդմիջարկված են որոշչով. միաբառ է, ուստի ընդմիջարկության տիպը՝ **քերականական զրոյական կապով:**

Ե.դ. 8-րդ համարի ԱԲ-ն են կազմում ստորադաս բաղադրիչի գլխավոր անդամները. ընդմիջարկված են հատկացուցչով և որոշչով. ընդմիջարկությունը տարասեռ է, տիպով՝ **բաղադրյալ չեզոք:**

Ե.ե. 9-րդ համարի ԱԲ-ն են կազմում հատկացուցիչն ու հատկացյալը. ընդմիջարկված են մենաբառ որոշչով. ընդմիջարկության տիպը՝ **քերականական զրոյական կապով:**

Ընդամենը՝

5 ընդմիջարկություն՝ 2 տիպով՝

ա. բաղադրյալ չեզոք,

բ. քերականական զրոյական կապով:

Խնդիրը լուծված է:

Ե Ջ Ր Ա Յ Ա Ն Գ ՈՒ Մ Ն Ե Ր

Թե՛ հայ, թե՛ ընդհանուր լեզվաբանության մեջ քիչ ուսումնասիրված երևույթներից է ընդմիջարկությունը: Սույն աշխատանքով ընդմիջարկությունների կարգաբերված քննության առաջին համեստ փորձն է կատարվել ժամանակակից հայերենում՝ ըստ գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական (մամուլի) ոճերից քաղած փաստական առատ նյութի, որի հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

1. Ընդմիջարկությունը քերականական կապակցություններն անջատող, իրարից հեռացնող պարզ կամ բաղադրյալ իրադրային միավոր է, որի սահմանները կարող են համընկնել բառի, բառակապակցության, նախադասության, քերականորեն չկապակցված բառերի ու այլ հարակցությունների սահմաններին: Ընդմիջարկությունները պատրաստի տրված միավորներ չեն. հանդես են գալիս կապակցական կաղապարների միջակայքում և զուտ իրադրային պայմանավորվածություն ունեն:

2. Լեզվի շարահյուսական կառուցվածքի միավորները համակարգում բոլորովին այլ տեղաբաշխում ունեն, ուստի անխուսափելի է ընդմիջարկության առկայությունը խոսքում՝ պայմանավորված նրա գծային բնույթով, քանի որ միշտ չէ, որ շարահյուսական կապակցությունների անմիջական բաղադրիչները խոսքում կողք կողքի են հանդես գալիս: Դրանք կարող են լինել խոսքային շղթայի տարբեր հատվածներում, և այդ դեպքում նրանց միջև առկայանում են տարակերպ միավորներ՝ պայմանավորված նույն շղթայում այլ կապակցությունների ներմուծման անհրաժեշտությամբ: Յե՛նց սրանով պայմանավորված՝ անխուսափելի է դառնում կապակցությունների ընդմիջարկումն այլ անդամներով: Շարահյուսական կառույցի անդամների թվաճը մեծացնում է ընդմիջարկությունների, հետևաբար և ընդմիջարկությունների քանակային աճի հավանականությունն ու հնարավորությունը:

3. Ընդմիջարկությունները բացահայտվում են կապակցական բոլոր հնարավոր կաղապարների որոշմամբ, որոնց ներսում են դրսևորվում այդ իսկ ընդմիջարկությունները: Այն միջավայրը, որտեղ ի հայտ են գալիս ընդմիջարկությունները, ներկայացնում են ընդմիջարկման ոլորտը: Ընդմիջարկման ենթակա շարահյուսական ամբողջությունը ընդմիջարկվելիք բաղադրությունն է: Ոլորտի ներսում հանդես գալով՝ ընդմիջարկությունը երկփեղկում է տվյալ շարահյուսական ամբողջությունը, որի երկփեղկված, ընդմիջված հատվածներն ընդմիջարկյալներն են կամ ընդմիջարկման բևեռները:

4. Շարահյուսական միավորները լինում են կաղապարային-կապակցական և ընդմիջարկային: Յանդես գալով կապակցական կաղապարների ներսում՝ ընդմիջարկությունն ինքն էլ կարող է այդ կաղապարային անդամներից մեկի բաղադրիչը լինել, բայց կարող է և չլինել: Վերջին դեպքում զուգադիպում են ընդմիջարկության և ներդրյալ ու միջանկյալ միավորների սահմանները: Ըստ այդմ՝ գծային հայեցակետով ունենում ենք պարտադիր և ոչ պարտադիր

ընդմիջարկություններ: Պարտադիր ընդմիջարկությունը շարահասական օրինաչափության դրսևորում է և պայմանավորված է շարահյուսական ընդհանուր անդամի՝ մեկից ավելի անմիջական բաղադրիչների առկայությամբ: Դրա դրսևորումներից է [հատկացուցիչ + որոշիչ + ընդհանուր լրացյալ] շարահյուսական կաղապարի իրացումը, որտեղ ընդհանուր լրացյալի անմիջական լրացում բաղադրիչներից մեկը՝ որոշիչը, պարտադրաբար ընդմիջարկում է հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը: Ընդմիջարկումը պարտադիր է, և որոշիչն էլ պարտադիր ընդմիջարկություն է խոսքի գծային բնույթի թելադրանքով: Մնացած դեպքերում գործ ունենք ոչ պարտադիր ընդմիջարկությունների հետ, որոնցից են միջանկյալ ու ներդրյալ և դրանց համարժեք միավորները: Այսպիսի մոտեցումը և քերականական կապակցությունների ու ընդմիջարկությունների անսխալ որոշումը հնարավորություն են տալիս տարբերակելու միմյանց պայմանավորող այդ երկու տեսակ լեզվական իրողությունները և գնահատելու նրանց դերն ու նշանակությունը խոսքի կառուցման գործում: Ընդմիջարկությունները շփման եզրեր ունեն շարահյուսական ամենատարբեր միավորների, կառույցների և այլ արտահայտությունների հետ. ընդմիջարկության՝ այս կամ այն շարահյուսական իրողությամբ զուգահիշելը դիպվածային է:

5. Ընդմիջարկությունները խմբավորվում են երկու սկզբունքով՝ քանակային և գործառական, որոնք անկախ չեն իրարից: Քանակային առումով ընդմիջարկությունները լինում են միաբառ և բազմաբառ: Գործառական առումով ընդմիջարկությունները ներկայանում են չորս խմբով՝ 1) քերականական զրոյական կապով ընդմիջարկություններ, 2) քերականական կապով ընդմիջարկություններ, 3) բաղադրյալ չեզոք կամ քերականական կապից զուրկ ընդմիջարկություններ, 4) համադրական կամ բազմահամադրական ընդմիջարկություններ:

6. Նմանատիպ ուսումնասիրություն կատարելու համար անհրաժեշտ և անխուսափելի է նկարագրական և անմիջական բաղադրիչների միջակայքի բազմությունների արտածման մեթոդների համատեղումը:

Ատենախոսության վերաբերյալ լույս են տեսել հետևյալ հոդվածները.

1. Ա. Բաբոյան, Քերականական կապակցություններ և ընդմիջարկություններ // Գիտական հոդվածներ (Բանասիրություն), Վանաձոր 2011, էջ 49-56:
2. Ա. Բաբոյան, Ենթակա-ստորոգյալ կապակցության ընդմիջարկումը ժամանակակից հայերենում // Գիտական հոդվածներ (Բանասիրություն) Բ, Վանաձոր 2011, էջ 84-97:
3. Ա. Բաբոյան, Բայական անդամի լրացումներ-լրացյալներ կապակցությունների ընդմիջարկումը, Գիտական հոդվածներ (Բանասիրություն) Ա, Վանաձոր 2013, էջ 20-39:

АРПИНЕ АРТУШЕВНА БАБОЯН
ДИСТАНТИВЫ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01. – «Армянский язык»

Защита диссертации состоится 22.06.2015 года, в 15:00 ч., на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК, в Институте языка им. Г. Ачаряна НАН РА, по адресу 0015Ереван, ул. Г. Лусаворича 15

РЕЗЮМЕ

Синтаксис современного армянского языка новейшего времени относится к числу наиболее разработанных отраслей языкознания. Однако язык, будучи сложной и многосторонней системой, раскрывает перед исследователем бесконечные возможности для новых наблюдений. К таковым возможностям можно, без всякого сомнения, отнести дистантивы, которые широко представлены в речи. Конечно, в специальной литературе, в работах тех или иных исследователей можно обнаружить ссылки на эту проблему, однако они носят преимущественно фрагментарный характер и касаются обычно тех синтаксических явлений, которые в данный момент находятся в центре внимания исследователя.

Дистантивы являются малоизученным явлением не только в армянском языкознании, но и в мировой лингвистической науке. Дистантивы – это те ситуативные единицы, которые проявляются и в других синтаксических конструкциях: они тоже могут быть компонентом этой моделированной основы, но могут и не являться ею. В последнем случае совпадают терминологические границы между дистантивами, а также вставными и вводными конструкциями. Заметно, что хотя они имеют отношение к дистантам и между ними наблюдается определенное сходство, все же следует отметить, что они в корне отличаются друг от друга с точки зрения целей и задач исследования. Если обособленные дополнения, вводные и вставные конструкции характеризуются интонационными особенностями, семантическими отношениями и пунктуационным выражением, то дистантивы имеют отношение к грамматическим сочетаниям и особенностям синтаксического построения предложения, что можно подтвердить многочисленными примерами и показать различие их задач и толкований.

Важно учесть следующее. Дистантивы являются не элементами, имеющими второстепенное значение внутри кратких или распространенных словосочетаний. Правда, они могут совпадать в своих границах с обособленными и вставными, вводными и вставными, вставными и дистантивными элементами. Однако дистантивы не ограничиваются только ими. В линейном рассмотрении имеются обязательные дистантивы. Обязательные дистантивы обусловлены синтаксическими нормами и наличием общего синтаксического члена при более чем одном элементе. При таком подходе и грамматические сочетания, и дистантивы позволяют

безошибочно дифференцировать эти два взаимообусловленных языковых явления и оценить их роль и значение в структуре речи. Дистантивы имеют точки соприкосновения с самыми разными синтаксическими единицами, структурами и с другими формами выражения и их совпадения с той или иной синтаксической единицей носит случайный характер.

Данная работа является первым опытом системного исследования дистантивов. Диссертация состоит из Введения, трех глав, Заключения, списков использованной литературы и сокращений. Объем работы – 151 страниц.

Проявление дистантивов в речи неизбежно. Это обусловлено речевой реализацией синтаксических моделей, линейной спецификой речи, так как не всегда компоненты синтаксических сочетаний в речи проявляются по хронологической очередности. Они могут присутствовать в различных фрагментах речевого ряда, и в этом случае между ними возникают разнородные единицы, обусловленные необходимостью внедрения прочих сочетаний в данной цепи. Поэтому для выявления дистантивов надо сперва представить все возможные модели, в составе которых они присутствуют. Дистантивы – это простые или составные единицы, разделяющие грамматические сочетания, определение которых может совпадать с определением слов, словосочетаний, предложений, грамматически не сочетаемых слов и с другими смежными понятиями. Ту среду, в которой проявляются дистантивы, называем дистантивной сферой, или дистантивным составом. Проявляясь внутри сферы, дистантивы митрализуют данную синтаксическую целостность, дистантивные митрализованные фрагменты которой мы именуем дистантами, или дистантивными крыльями / полюсами.

Дистантивы классифицируются по двум принципам – количественному и функциональному, – которые, однако, зависимы друг от друга. С количественной точки зрения, дистантивы бывают односложные и многосложные. С функциональной точки зрения, дистантивы можно подразделить на четыре группы: 1) дистантивы с нулевой грамматической связью; 2) дистантивы с грамматической связью; 3) дистантивы с составной нейтральной связью, или дистантивы, лишенные грамматической связи; 4) сопоставительные, или полиидентифицированные дистантивы. Виды, классифицированные по этим двум принципам, в работе рассматриваются в бинарном единстве.

Исследования в работе проводятся преимущественно по описательному методу. В основе заложена также идея о методе презентации непосредственных компонентов в ситуативных множествах, что облегчает правильное разрешение количественных и функциональных видов дистантивов внутри комбинаторных моделей.

ARPINE ARTUSH BABOYAN
Detachments in Modern Armenian

Thesis for the degree of Candidate of Philological Sciences for specialty 10.02.01

”Armenian language “

The defence will take place on 22 June, 2015, at 15.00, at the session of Specialized Council of Linguistics 019 of Language Institute after H. Acharyan of NAS of RA
(15 Grigor Lusavorich str., Yerevan 0015, ARMENIA)

Summary

Alongside with other linguistic phenomena modern Armenian syntax is considered to be comparatively well analyzed spheres of the Armenian Linguistics of the latest period. However, language, with its complicated system, gives infinite opportunities to the language learners for new linguistic discoveries. One of the phenomena that gives such an opportunity is the Detachment, which overwhelms discourse relations by itself. To a certain extent linguists referred to Detachment in specialized publications but these references had some casual effects conditioned by the fact that these syntactic phenomena are represented through their relations to other syntactic phenomena.

Detachment is a non-profoundly studied phenomenon both in the Armenian Language and in General Linguistics. Detachment is that situational unit which manifests itself within conjunctive patterns and syntactic relations. It can either be or not be the component of one of these pattern members. In the latter case the boundaries of detachments and the boundaries of parenthetical and inserted units coincide. It is noticeable that even if they have relations to detachments and there are lines of comparison between them, anyhow, they drastically differ in their aim and the subject of study. If dividable modifiers, parenthetical and inserted units are characterized by intonational, semantic relations and punctuation characteristics, then detachments are characterized by grammatical relations and features of sentential structures. It is possible to show their differences through a number of examples.

It is important to take into consideration the following: Detachment as a phenomenon does not imply a unit of secondary significance within this or that structural cohesion. It is true that the lines of divided and detaching units, parenthetical and detaching units and also inserted and detaching units may coincide, but the diapason of detachments is wider. Syntagmatically there exist *obligatory* and *non-obligatory* detachments. The obligatory detachment is a manifestation of syntactic regularity and is conditioned by the presence of more than one immediate constituents of the syntactic general constituent. In other cases we deal with non-obligatory detachments which are the parenthetical and inserted

units. Such a viewpoint and distinct definition on grammatical combinations and detachments give opportunity to differentiate these two linguistic phenomena which are determined by each other. At the same time we appreciate their role and significance in discourse construction. Detachments have relating lines with most different syntactic units, structures and expressions. It is typical of detachments to coincide with this or that syntactic phenomenon.

The present research is considered the first experiment in the field of the systematic study of *Detachments* in modern Armenian.

The thesis comprises an introduction, three chapters, a conclusion, a bibliography and lists of abbreviations. The work consists of 151 pages.

The presence of detachments is inevitable in speech. This phenomenon is determined by the speech usage of syntactic patterns and the syntagmatic nature of speech, since the components of syntactic conjunctive structures appear in speech next to each other not often. They can be in different sections of speech sequence and in this case various units appear between them, conditioned by the usage necessity of other connections in the very sequence. In order to reveal the essence of detachments we should represent all the possible patterns within which detachments manifest themselves. This is precisely what we have done in our research.

Detachment is a simple or composite unite which divides grammatical combinations. Its boundaries can coincide with the boundaries of words, word combinations, sentences, grammatically non-conjunctive words and other combinations.

The sphere where detachments reveal themselves is called detachment sphere or a structure subject to detachment. Within the detachment sphere detachments divide that very syntactic integrity. The detached parts of this syntactic integrity are called wings or poles of detachment.

Detachments are classified according to two principles *quantitative* and *functional*. They are interdependent.

From the quantitative point of view detachments can be *one-word* and *poly-word*.

From the functional point of view detachments are divided into four groups

1) detachments of zero grammatical cohesions, 2) detachments of grammatical cohesions, 3) composite neutral or detachments devoid of grammatical cohesions, 4) synthetic or poly- synthetic detachments

These types of detachments which have been classified according to two principles are observed jointly in the research.

The research is chiefly done through descriptive method. We have also focused on the method of Immediate Constituents Analysis. This method makes it easier to differentiate the quantitative and functional detachments within the context of conjunctive patterns.